



Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Զատկի հրաշափառ տօնին առիթով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէն եկեղեցւոյ Սրբազան Պետերոսն յղուած են հետեւեալ շնորհաւորական հեռագիրները

Երուսաղէմ, 7 Ապրիլ 1985

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին

Ս. Զատկի հրաշափառ տօնին բարեբաւարիկ առիթով, խոնարհաբար կը ներկայացնենք Ձերդ Սուրբ Օծութեան մեր և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան սրտագին շնորհաւորութիւնները, խնդրելով Բարձրեալն Աստուծմէ որ շնորհէ Ձեզ յաջողութիւններով լի երկար և առողջ կեանք, և Մայր Աթոռ Ս. Էջմիածինն՝ անսասանութիւն և բարգաւաճում:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 7 Ապրիլ 1985

Նորին Սրբութիւն

Յովնանէս-Պօղոս Բ. Պապ

Վատիկան

Ս. Զատկի հրաշափառ տօնին բարեբաւարիկ առիթով, յարգանքով կը ներկայացնենք Ձերդ Սրբութեան մեր սրտագին շնորհաւորութիւնները մաղթելով Ձեզ, շարունակական առողջութիւն և Ձեր մեծ եկեղեցին՝ բարգաւաճում: Թող Ամենափարոզն Աստուած յաջողութեամբ պսակէ Ձեր բոլոր ջանքերն ու ծրագրերները:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ, 14 Ապրիլ 1985

Ն. Ամենապատուութիւն Պիմէն

Պատրիարք Համայն Ռուսիոյ

Մոսկուա

Ս. Զատկի հրաշափառ տօնին առիթով, կը ներկայացնենք Ձեզ մեր եղբայրական և քնքիւ շնորհաւորութիւնները, սրտագին մաղթանքներով Ձերդ Սրբութեան առողջութեան և բարգաւաճ գործունէութեան համար:

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի